ՀԱՇՎԵՏՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի ՀՀ Վայոց ձորի մարզի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի

2014թ. ՀՀ պետական բյուջեով Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսված գումարի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 312.4 կմ ճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 232.6 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ, իսկ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա իրականացվել է 118.7 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 29.0 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ:

Վերահսկվել է մարզում վերանորոգվող ավտոճանապարհների աշխատանքների կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում շինարարական կազմակերպություններին ցուցաբերվել է աջակցություն:

2014թ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջոցով պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ Վայոց ձորի մարզում կատարվել է հետևյալ աշխատանքները.

1. Մ-2 Ելփին ճանապարհի կմ 0 – կմ 1.5 ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքներ – 21.4 մլն. դրամ

2. Ելփին գյուղի 400 քառ.մ հրապարակի հիմնանորոգման աշխատանքներ - 3.4 մլն. դրամ

3. Զառիթափ գյուղի 600 մ ավտոճանապարհի հիմնանորոգում 39.4 մլն դրամ:

2014թ. մարզպետարանի միջոցով ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացվել է.

4. Հերհեր համայնքի ճանապարհի մասնակի հատվածների բարեկարգման աշխատանքներ կմ 0+000 – կմ 10+150 – 80.4 մլն. դրամ

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների գծով 2014թ. մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմանանորոգման, վերանորոգման, ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումները կազմում են 583.5 մլն դրամ: 2014թ. մարզում հիմնանորոգվել է 12.25 կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ:

Չնայած կատարված աշխատանքներին դեռևս կան ավտոճանապարհներ Մ2 - Կարմաշեն, Մ2 - Արտավան, Հ42 – Զառիթափ – Գոմք - Կապույտ, Մ2 - Արին, Սերս-Բարձրունի, Մ2 - Զեդեա, Տ-9-21 - Հորբատեղ, Մ2 - Գետափ, Հերմոն - Վարդահովիտ, Հերմոն - Գողթանիկ, Մ2 - Մոզրով և Մ2 – Չիվա - Ռինդ ավտոճանապարհի 1.8կմ հատվածը/, որոնք գտնվում են անբարեկարգ վիճակում: Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով, մրցութային կարգով:

,,Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի մատուցման,, ծրագրով կազմակերպվել է 12 երթուղիներում մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման աշխատանքներ:

Մշտական հսկողություն է իրականացվել էլ.ցանցերի, կապի, հեռուստատեսության և ,,Հայփոստի,, բնագավառներում կազմակերպությունների կողմից բնակչության սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:

Մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է համատեղ հանձնաժողով /էլ. ցանցերի և կադաստրի ներկայացուցիչներից/ էլ. հաղորդման գծերի անվտանգության գոտիներում կառուցված շենք-շինություններ խախտումների ուղղությամբ, կատարվել է գույքագրում: Այժմ աշխատանքներ են տարվում նմանատիպ խախտումներ թույլ չտալու և այն վերացնելու համար:

Աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյան